

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 198

Հոգու բնակութիւն – Յաջորդ, Ուէտամինստըր Հաւատոյ Հանգանակը նշում է որ հաւատացեալի յարատեւութիւնը հիմնուած է Հոգու բնակութեան վրայ: Աստուածաշունչը սովորեցնում է որ բոլոր նրանք որոնք վերածնել են Հոգուց նաեւ Հոգովը ներբնակուած են (Հռովմայեցիս 8:8-9, Ա. Կորնթացիս 6:19, Բ. Տիմոթէոս 1:13-14): Պօղոսը կոչում է Սուրբ Հոգուն որդեգրութեան Հոգին, որով հաւատացեալներ որդեգրուած են Աստուծոյ ընտանիքի մէջ, դառնում են Աստուծոյ ժառանգներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ, դառնում են Քրիստոսի թագաւորութեան անդամներ, եւ ուստի իրենց վրայ ստանում են Աստուծոյ անունը (Յովհաննէս 1:12, Հռովմայեցիս 8:14-17, Կորնթացիս 1:13, Յայտնութիւն 14:1): Ուստի, կորցնել փրկութիւնը նշանակում է մէկի մարմնեղէն սիրտը վերադառնայ մի քարեղէն սրտի. անձը վեր առնի Աստուծոյ ընտանիքից, Քրիստոսի թագաւորութիւնից. Աստուծոյ անունը ջնջի նրանցից, դարձեալ դառնայ մեղքի ու Սատանայի ստրուկը. եւ ամենից վատը, կորցնի Սուրբ Հոգուն, որը այլեւս չի բնակում նրանում: Այսպիսի վարդապետութիւնը ոչ միայն անտրամաբանական, տգէտ, ու հակասութեամբ լի է, այլ այն նաեւ ցուցադրում է մեծ անարգանք Աստուծոյ հանդէպ՝ թէ ով է Աստուած եւ թէ ինչ է արել Նա:

Առաւել, Աստուածաշունչը սովորեցնում է որ բոլոր նրանք որոնք Հոգովը ծնուած են Հոգովը նաեւ կնքուած են (Եփեսացիս 1:13-14): Սուրբ Հոգին Աստուծոյ մեր սեփականութեան ներքին ու անջնջելի նշանն է՝ վաւերացնելով ու պաշտպանելով մեզ որպէս Նրա զաւակները: Աստուածաշունչը ուսուցանում է որ Հայր Աստուածը տւել է Սուրբ Հոգուն որպէս սկզբնական գրաւը կամ կանխավճարը որը երաշխաւորում է մեր ամբողջ ժառանգութիւնը (Բ. Կորնթացիս 1:21-22, Եփեսացիս 4:30, Ա. Պետրոս 1:3-7):

Աստուծոյ սերմ – Քրիստոնէայի յարատեւութիւնը նաեւ կախեալ է նրանցում եղած Աստուծոյ սերմից: Այս ակնարկում է իրենց նոր ծնունդի ժամանակում եղած Սուրբ Հոգով ցանուած հաւատացեալների մէջ նոր բնութիւնը: Հակառակ Ադամում եղած հին բնութեան՝ մեղքի ու մահուան բնոյթը (Երեմիա 17:9, Հռովմայեցիս 3:10-12, Եփեսացիս 2:1-3), այս սերմը Քրիստոսում եղած նոր բնութիւնն է՝ ուղղարարութեան ու կեանքի բնոյթը (Երկրորդ Օրինաց 30:6, Եզեկիէլ 36:26-27, Բ. Կորնթացիս 5:17, Ա. Տիմոթէոս 6:11, Բ. Տիմոթէոս 2:22, Ա. Յովհաննէս 4:7, 19):

Ա. Յովհաննէս 3:9ում Յովհաննէսը ասում է որ Աստուծոյ սերմը մնում է (կենում է) նրանց մէջ որոնք վերստին ծնուել են, օգտագործելով մի բայ որը նշանակում է մի շարունակական, անընդհատ արարք որը կ'տեսի մշտապէս: Պետրոսը ասում է որ այս սերմը անապական կամ անեղծանելի է (Ա. Պետրոս 1:23): Սուրբ Գիրքը յստակօրէն սովորեցնում է որ Աստուծոյ սերմը կամ Սուրբ Հոգուց հաղորդուած նոր բնութիւնը կ'կենայ մեր մէջ յաւերժաբար, չի ապականի, անսպառ է, եւ հետեւաբար երբէք չի կարող հակաշրջի կամ մեռնի. փոխարէն, այդ կ'կենայ մեր մէջ մշտապէս եւ կ'աճի յաւիտեան:

Շնորհքի ուխտի բնութիւն – Վերջապէս, հաւատացեալի յարատեւութիւնը հիմնուած է շնորհքի ուխտի բնութեան վրայ: Առաջին ուխտը որ Աստուած հաստատեց մարդու հետ գործերի ուխտն էր՝ որում Ադամը կոչուած էր հնազանդելու Աստուծոյ պատիւը, որով նա ձեռք կ'բերէր յաւիտեանական կեանք՝ իր եւ իր սերունդի համար: Բայց Ադամը մեղանչեց, ուխտազանցեց, եւ ստացաւ սպառնացած անէծքը, որն էր մահ՝ հոգեւոր ու ֆիզիքական (Ծննդոց 2-3, Հռովմայեցիս 5:12, 15, 19, Ա. Կորնթացիս 15:22): Եւ որպէս մարդկութեան դաշնակցային գլուխը բոլոր մարդկութիւնը ընկաւ եւ մեռաւ Ադամում:

Բայց այդ չէր պատմութեան վերջը, քանի որ անցեալի յաւիտեանականութեան մէջ ըստ Երրորդութեան փրկանատրութեան ուխտը Հայր Աստուածը որոշել էր նւիրելու մի ժողովուրդ, որպէս սիրոյ նւիր, Իր Որդուն (Յովհաննէս 17:6, Եբրայեցիս 2:10-13): Ուստի Աստուած հաճեցաւ հաստատելու մի երկրորդ ուխտ մարդու հետ՝ շնորհքի ուխտը, որով Նա ազատօրէն մատակարարեց փրկութիւն մեղաւորների համար Յիսուս Քրիստոսի միջոցով՝ որը որպէս նրանց փոխանորդը կատարելապէս յագեցրեց Հօր պահանջը: Բոլոր նրանք որոնք Հայրը տւել է Իր Որդուն շնորհաբար ստանում են այս ուխտի օրհնութիւնները Քրիստոսին հաւատալու միջոցով (Յովհաննէս 6:40, Հռովմայեցիս 3:24, 26, 5:18-19, Ա. Կորնթացիս 15:45):

Մենք բոլորս ուխտաբեկներ ենք, նոյնիսկ որպէս հաւատացեալներ: Միայն Աստուած է հաւատարիմ ուխտապահը, եւ շնորհքի ուխտը մի յաւիտեանական, անքայքայելի, եւ անխախտելի ուխտ է, հաստատուած ու իրականացուած Ինքն Աստուծով (Ծննդոց 15:9-12, 17-18, 17:7, Նէեմիա 9:32, Երեմիա 31:3, 31-36, 32:40, Բ. Կորնթացիս 1:19-22, Եբրայեցիս 6:13-14, 16): Հակառակը հաստատել հենց Ինքն Աստուծոյ վաւերականութեան ու վստահելիութեան հարցաքննումն է՝ Նրա նկարագիրը, Նրա արարքները, Նրա երդումն, ու Նրա խոստումները, որը աներեւակայելի, անխելք, եւ անարգելի մի արարք է: Թող որ մենք երբէք այս բանին յանցաւոր չ'լինենք: